

Կ2. Եւ մինչդեռ Վահան յայսպիսի յուզմունսս մտաց կայր տարակուսեալ՝ լինէր յանկարծակի խռովութիւն յուզմանց յաշխարհին Վրաց. Վախթանգ սպանանէր զբոլեշին զանաւրէնս Վազգէն յամի քսաներորդի հինգերորդի Պերոզի արքայի: 2 Չոր լուեալ Յայոց աշխարհիս մարդկան, յորոց բազումք այն ամ յԱղուանս էին, յապստամբ ամրականացն կռուի, որոց բովանդակին զաւրագլուխ Եր Չարմիր Յազարաւուխտ, եւ Յայոց աշխարհիս Ատրվշնասպ Յոզմանդեան Եր մարգպան. իսկ քրիստոնեայ մարդիկն Յայոց, որ այն ամ անդ ի կռուին էին՝ հարեալք մաշէին առաւել եւս յարհամարհանաց եւ ի նախանծուէ ի յետին իշխանացն Յայոց, որք ուրացութեամբն զոռոգացեալ ամբարհաւաճէին ի ժամանակին, քան թէ ի բռնութենէ պարսիկ զաւրագլխացն գործոց: 3 Որք ի ժամանակին իբրեւ լուան զապստամբութիւնն Վրաց արքային՝ ցնծային ուրախալից սրտիւ: 4 Վասն զի գայր առ Նոսա համբաւ, թէ Վրաց արքայ ասէ, թէ «Ես միում ումեք զկռիւ չտամ տեսանել, այլ այնչափ հանեմ Յոնս, որում ոչ կարիցեն հարկանել ի դիմի զաւրքն Պարսից»:

5 Չաւրացեալք յայնպիսի համբաւոց¹ քրիստոնսսերքն՝ եւ անծանց ակն ունէին աւզտի եւ բարի այցելութիւն գտանել ի Բարձրելոյն. բայց երկնչէին, թէ մի՛ գուցէ առեալ զգունդն Յայոց զաւրագլխացն Պարսից՝ ընդ Նոյն ի դունն գումարիցեն:

6 Այլ քրիստոս յայնպիսի կարծեացն զերծուցեալ զնոսա՝ գային ի Յայս. եւ եկեալք ի գաւառն Շիրակայ, ի դաշտն, ուր բանակէր² մարգպանն Յայոց Ատրվշնասպ Յոզմանդեան, եւ առ Նմին հազարապետն Յայոց Վեհվեհնամ. աստ խորհուրդ ի մէջ առեալ արանց ոմանց նախարարացն Յայոց, որք զտրտմելն եւ զտարակուսելն ի բազում ժամանակաց գիտէին զՄամիկոնէին Վահանայ յաղագս մոգութեանն անուան, եւ ասէին, թէ «Կարի պատեհ Եր եւ մեզ եւ Նմա ժամս այս փրկութեան. Նմա՝ ապրել ի խղճէ մտացն իւրոց, եւ մեզ՝ զերծանել ի հանապազորդեայ կասկածանացն եւ յարաժամ հարանացս, որոց ծառայեմքս ի հարկէ հեղձամղձուկս նախանծու: 7 Եւ արքայդ Վրաց Վախթանգ այրացի³ Է. ո՛ր գիտէ, եւ բազումողորմս Աստուած հայեսցի ի վտանգս մեր եւ աւգնեսցէ մեզ, եւ հանդերձ Վրաւք թերեւս կարող լինեաք առ սակաւ մի աշխատ առնել զՊարսիկս»:

8 Եւ խորհեալ այսպէս սակաւ ոմանց ի Յայ նախարարացն՝ լսելի լինէր խորհուրդն եւ յայլս ոմանս. եւ որպէս յԱստուծոյ առաջնորդութենէ՝ միաբանէին կամաւ եւ յաւժարութեամբ ամենեքեան որք լսէին զխորհեալսն:

1 ՏՏ. համբաւոյ

2 ՏՏ. բնակէր

3 ՏՏ. արեացի